# ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ՆԱՄԱԿ Է ՀՂԵԼ ՀՌՈՄԻ ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑՈՒ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԻՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը Բաղդադի Սայիդաթ ալ-Նայյաթ Ասորական Կաթոլիկ եկեղեցում տեղի ունեցած ահաբեկչական գործողության հետևանքով զոհված 58 անմեղ զոհերի և Ասորական Կաթոլիկ (Քաղդեական) եկեղեցու անդամների սպանության կապակցությամբ նոյեմբերի 1-ին ցավակցական նամակ է հղել Հռոմի Կաթոլիկ Եկեղեցու քահանայապետ Բենեդիկտոս ԺԶ պապին:

Նորին Սրբության նամակում մասնավորապես ասված է. «Դիմելով Իրաքի իշխանություններին քրիստոնեական փոքրամասնությունների իրավունքներն ու ազատությունն ապահովելու կոչով՝ միաժամանակ խստորեն դատապարտում ենք այս անթույլատրելի արարքը, որը միջկրոնական ատելություն բորբոքելու կանխամտածված քայլ է այնպիսի մի երկրում, որտեղ մահմեդականներն ու քրիստոնյաները դարեր շարունակ ապրել են սիրո և խաղաղության մեջ: Խորապես ցավակցում ենք Ձերդ Սրբությանը, Իրաքի Ասորական Կաթոլիկ (Քաղդեական) եկեղեցու Պատրիարքին, եկեղեցականներին ու հավատավոր ժողովրդին և աղոթում առ Ամենողորմածն Աստված, որպեսզի Իր սիրով և ողորմությամբ Աստծո արքայության մեջ ընդունի անմեղ զոհերի հոգիները»:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՄԷ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՒՏՐԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ

Նոյեմբերի 4-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոս և Ծայրագույն Պատրիարքն ընդունեց Արաբական Միացյալ Էմիրությունների արտաքին առևտրի նախարար Շեյխա Լուբնա ալ-Քասիմիի գլխավորած պատվիրակությանը՝ ԱՄԷ-ում ՀՀ դեսպան Վահագն Մելիքյանի ուղեկցությամբ:

Նորին Սրբությունը ողջունեց տիկին նախարարին և պատվիրակության անդամներին՝ ուրախություն հայտնելով Հայաստանի և Արաբական Միացյալ Էմիրությունների միջև խորացող ջերմ ու եղբայրական հարաբերությունների, երկու ժողովուրդների բարեկամական կապերի առնչությամբ:

Վեհափառ Հայրապետն իր ջերմ ողջույնները փոխանցեց նաև Արաբական Միացյալ Էմիրությունների Շարժայի կառավարիչ Շեյխ Սուլթան բին Մուհամմադ Ալ Քասեմիին, որի

հովանավորությամբ վերանորոգվում է Հայաստանի նշանավոր միջնադարյան վանքերից մեկը՝ Հաղարծինը:

«Մեր օրհնություններն ենք բերում ձեր առաքելությանը եւ մաղթում հաջողություններ: Թող Աստված պահի պահպանի խաղաղության մեջ Արաբական Միացյալ Էմիրություններ, ասպվածասեր նրա ժողովրդին եւ բարեկամությունը երկու երկրների», - իր խոսքում նշեց Նորին Սրբությունը:

Հանդիպման ավարտին հյուրերն այցելեցին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի թանգարան եւ ծանոթացան հայ հոգեւոր մշակույթի գանձերին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻՆ

Նոյեմբերի 5-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոս եւ Ծայրագույն Պատրիարքն ընդունեց Իրանի Իսլամական Հանրապետության Արեւմտյան Ատրպատականի նահանգապետ Վահիդ Ջալալզադեի գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ Հայաստանում ԻԻՀ-ի արտակարգ եւ լիազոր դեսպան Սեյեդ Ալի Սաղայանի եւ Արմավիրի մարզպետ Աշոտ Ղահրամանյանի: Պատվիրակությունը Հայաստան է ժամանել Արմավիրի մարզի հետ տնտեսական համագործակցության շուրջ խնդիրները քննարկելու նպատակով:

Զրույցի ընթացքում Նորին Սրբությունն անդրադարձավ Հայաստանի եւ Իրանի ջերմ ու բարեկամական հարաբերություններին՝ ուրախություն հայտնելով դրանց խորացման համար:

Վեհափառ Հայրապետը գնահատանքի ու շնորհակալական խոսք հայտնեց նաեւ Իրանի Իսլամական Հանրապետության իշխանություններին՝ իրանահայության նկատմամբ ցուցաբերած բարի վերաբերմունքի եւ աջակցության համար:

Նահանգապետ Վահիդ Ջալալզադեն իր շնորհակալությունը եւ ուրախությունը հայտնեց Հայաստանում, մասնավորապես Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում գտնվելու համար: Նա շնորհավորեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին գահակալության 11-րդ տարեդարձի կապակցությամբ՝ բարի նշան եւ հիշարժան համարելով տարեդարձի օրերին իր այցելությունը Մայր Աթոռ: Մեծարգո նահանգապետն իր երախտագիտությունը հայտնեց նաեւ Հայ Առաքելական Եկեղեցուն՝ ի մասնավորի Նորին Սրբությանը՝ ԱՄՆ-ում Ղուրանի այրման դեպքերին քննադատական արձագանք տալու համար: Այս կապակցությամբ Վեհափառ Հայրապետը նշեց, որ Հայ Եկեղեցին անընդունելի է համարում այլոց սրբությունների նկատմամբ ցանկացած ոտնձգություն:

Հանդիպման ավարտին պատվիրակությունն այցելեց Մայր Աթոռի թանգարան:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ



ԱՄԷ արտաքին առևտրի նախարարության պատվիրակությունը վեհարանում